




ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 165

19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԵՒ

ՏՕՒԱՑՈՅՑ

Սեպտ.	20	†	Կիր.	ապ.	Բ. Զկնի խաչին:
	21		Բշ.	բձ.	Ս. Մամասայ եւ Փիլիկսիմոնի եւ Սիմեոնի Սիւնակեցիին:
	22		Գշ.	բկ.	Ս. Կուսանացն Փեբրոնեայ եւ Մարիանեայ:
	23		Դշ.	գձ.	Պահոց:
	24		Եշ.	գկ.	Ս. Հայրապետացն Անքիմոսի եւ Երանոսի:
	25		Ուր.	դձ.	Պահոց:
	26		Շք.	դկ.	Ս. Դեորգայ զօրավարին եւ Ասոկոսի եւ Ռումանոսի երգեցողին



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Չորրորդ տարի Թ 19 Սեպտեմբեր 1914 Թիւ 165

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւճազանց շարքաւորերը շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բուրգաւսման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Սրբազան Հայրն օրագին կ'օրհնէ յիշեալ Շարքաւորերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարդ. Մէրի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԴ. Թեոքեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՊԵՏԻ Է ԸԼԼԱՆՔ ԳԵՐԱՋԱՆՅՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿԷ
Բ.

ՈՐչափ ցաւալի է տեսնել մեր մէջ ան-
ձինք, որոնք ամենէն փոքր առաւելութիւն-
ները կը գնահատեն, բայց Հաւատոյ անգին
և վսեմ գանձը չեն յարգեր բնաւ: Յաջա աշա-
պիսեաց անոնք որ ներքին ու խորին հա-
մոզմամբ արժանաւոր յարգ ու պատիւ կ'ըն-
ծայեն անոր, կը համարուին մոլեռանդ ու
անհերոզ: Ինքզինքնին լուսաւորեալ հոշա-
կողներու ամենէն սովորական ու ամօթալի
նախապաշարումներէն է այս, որոյ դէմ ըստ
բաւականի չեն զգուշանար գուցէ ինքզինք-
նին բարեպաշտ կարծողներէ ոմանք:

Պէտք է փառք համարինք մեզ մեր Կա-
թողիկէ Հաւատքը, որուն հետ ո՛չ մէկ կրօնք
կրնայ բաղդատուիլ: Ճանչնանք այն մեծ
երջանկութիւնը զոր ունինք անոր վերաբե-
րելու. երախտագէտ ըլլանք յաւէտ Բարձ-
րելոյն՝ որ միլիոնաւորներու մէջէ զմեզ ըն-
տրեր և օժտեր է սոյնպիսի անգնահատելի
պարգեւով մը:

Բայց լուսաւորուինք, իրաց խորը թա-
փանցենք իմաստասէր մտօք, և չխարենք
զմեզ վայրապար. կէս կաթողիկէութեան մը
արժէքը մեծ բան չէ, և միջակ կաթողի-
կէութիւն մը պատիւ չի բերեր մեզ, ո՛չ մար-
դոց և ո՛չ Աստուծոյ առջեւ:

Ի՞նչ օգուտ ծածկել... եթէ այսօր մեր
հասարակութիւնը այս վրդովալից ու յողա-
տխուր կացութեան մատնուած է, գլխաւորա-
պէս պատճառը այն է որ հին ու նոր սերունդին
մի մասը չէ՛ կրթուած կաթողիկէ հաստատուն

սկզբունքներով, չէ՛ ուզած զօրանալ, աճիլ, զարգանալ, յառաջդիմել իր հաւատքին մէջ. ուզած է յառաջադէմ ու յառաջդիմական ըլլալ ամէն բանի մէջ, և չհաւատալիօրէն յեօտադիս ու յեօտադիական կրօնքի մէջ: Ասով մեղանշած է նոյն իսկ իր սկզբունքներուն դէմ, — որ էապէս զարգացման ու յառաջդիմութեան ոգի մըն է, — և մեղանշած է մանաւանդ մեր վսեմախոհ և սրբաշունչ Հայրապետաց ոգւոյն դէմ, որոնք Լատինի և Յոյնի գծուծ ու փոքրոցի խտրութիւնները չէին ճանչնար բնաւ, և որոնք պուրբութեան հոգի ընդունէին, կ'իւրացնէին ինչ որ կար գովելի և նպաստաւոր ջերմեօրէնութեան՝ օտարազգի ուղղափառ քրիստոնէից քով: Ասով բարձրացան Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծէսն ու արարողութիւնները այն հոգեզմայլ գեղեցկութեան, յորում միացեալ կը փայլին սխրալի ներդաշնակութեամբ Լատինին աստուածաբանական ըրջութիւնը, Յոյնին քնարերգական թոհիչը և Ասորւոյն տխրանոյշ միսթիքականութիւնը:

Հին ու նոր ամէն վեհ հոգիներու նման ջանա՛նք ըլլալ գերազանց կաթողիկէներ, Catholiques éminents. ապահով ըլլանք թէ ասով հայ ազգութիւնը ոչինչ պիտի կորսնցնէ ընդհակառակը շատ բան պիտի չանի: Մենք որ կ'ատենք միջակութիւնը ամէն բանի մէջ, ատենք զայն մանաւանդ յիշաւ կրօնի:

Ի՞նչ պէտք է ատաջնակարգ, պերազանց կաթողիկէ ըլլալու համար:

Ա. Պէտք է Հաւատոյ միացնել նաև ազնիւ զգացում, մաքուր կենդանաւարութիւն և օրինակելի գործքեր:

Ո՛վ պիտի յիշէր, եթէ մենք մոռնայինք Հոգւոյն Սրբոյ վճիռն ու ազդարարութիւնները կրկին ու չորեքկին. «Զի՛նչ օգուտ իցէ եթէ ոք ասիցէ հաւատս ունել՝ և գործս ոչ ունիցի. միթէ կարիցեն հաւատքն ապրեցուցանել զնա... Հաւաս՛ եթէ գործս ոչ ունիցիս յետեալ եմ առանձինն: ... Կամի՛ս գիտել, ո՛վ մարդ սնոտի, զի հաւատք առանց գործոց զատարկ են... Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս և հաւատք առանց գործոց մեռեալ են» (Յակ. Բ. 14-26):

Ահաւասիկ քսան դարէ ի վեր տրուած է պատասխանը անոնց որոնք կը գոչեն ընդդէմ չորս հոգմերուն. «Մենք ուղղափառ ենք, հաւատոյ թշնամի չենք, անիրաւութիւն է զմեզ ամբաստանել, ևն. »:

Զէ՛ք տեսներ թէ զձեզ առաջին դատապարտողը Ս. Գիրքն է, վասն զի, այո՛, կրնաք հաւատք ունենալ, չեմ ժխտեր զայս. բայց ի՞նչ օգուտ երբ ձեր գործքերը օրինաց դէմ, վայելչութեան դէմ, սիրոյ և խոնարհութեան դէմ՝ կու գան սնգթօրէն «սպաննել հաւատքը» որով կը պարծիք. Լսեցէք Առաքելոյն դեռ աւելի սաստիկ յանդիմանութիւնը. «Դու հաւատաս... բարեք առնես. և դեմք հաւատաս և աւստես» (Մաթ. 19): Ո՛հ, ինչպիսի՜ պատասխանատուութիւն:

Գրագէտ, իմաստասէր, մեծահոնճար և չնորհազարդ կին մը որ իր սեռին ամենէն մաքուր ու անմահ փառքերէն մին եղաւ ժԹ. գարուն մէջ, Հայր Լագուտէրի բարեկամ ու խորհրդականը, ծնած ոռու հերձուածի մէջ, ապրած ու մեռած Ս. Եկեղեցւոյ ծոցին մէջ, այս նշանաւոր խօսքերը գրած է, որոնց վրայ կ'որոշէ որ ուղղափառք անդրադառնան ու խորհին գէթ մերթ ընդ մերթ. յիւրիկ ե ըրչալ Կաթողիկէ, և դժուարի՛ն ըլլալ քրիստոնէս: Il est facile d'être Catholique, et difficile d'être chrétien.¹

Ստուգիւ խորին մտածութիւն որ կը նշանակէ. զիւրին է ընդունիլ տեսականօրէն հաւատոյ մասերն ամբողջ, Ս. Աւետարանի յայտարարութիւնները անայլալ ու անփոփոխ, բայց դժուար է այդ աստուածային ձայնին, այդ սուրբ սկզբանց համեմատ անստգիւտ վարքով և նախանձելի ձերքերով ու առաքինութիւններով փայլիլ: Ի՞նչ է Աւետարանն իսկ, եթէ ոչ բարձրաբարբառ յորդոր մը, մշտաբարոզ հրաւէր մը. ամէնէն մաքուր բարոյականի, հանապազօրեայ ճիգերու ու ամենէն վսեմ դիւցազնութեանց: Ամէն դարերու Հայրապետներն ու Քահանայապետները երկնաւոր Վարդապետին վճիռը չեն յի-

¹ Parole de Mdm. Swetchine, après sa conversion, citée dans la Vie du T. R. P. Dom Guéranger.

չեցուցած միթէ. Այնպէս յուսաւորեացէ յոյս
 ան առաջի մարդկան, որպէս զի ճեղքէն զգործս
 ան բարիս, եւ փստաւորեացեն զՀայր ան որ
 յերկինս ե (Մատթ. Ե. 16):

Բ. Պէտք է Եկեղեցւոյ սուրբերուն, ե-
 րանելեաց, երանաշնորհ ծառայից, բազմա-
 դին անձնաւորութեանց, հրաշից, մասնա-
 ւոր յայտնութեանց, ջերմեանդութեանց ու
 բարեպաշտական աւանդութեանց մասին ոչ
 և յարգութիւն անուանենք. երբ մանաւանդ
 հոգեւոր իշխանութիւնը խօսած ու խրախոյս
 կարողացած է հաւատացելոց, Եկեղեցւոյ մէջ
 այնքան բարի սովորութիւններ, այնչափ անոյշ
 ու գեղեցիկ ջերմեանդութիւններ կան, ո-
 թոնց ո՛չ միոյն կը պարտաւորէ նա զմեզ,
 բայց որոնք ամէնքն ալ մեծապէս օգտակար
 են մեզ, կ'աճեցնեն մեր սէրն ու վստահու-
 թիւնը, կը հրաւիրեն առատօրէն մեր վրայ
 երկնից օրհնութիւնները և մեր հոգւոյն կու-
 տան ապրիլ խնկաւէտ ու գերբնական մթնո-
 լորտի մը մէջ: Ջերմեանդութիւնք ճանա-
 պարհ հաշիի, պատուական Արեան, հինգ
 Վէրքերուն, պաշտելի Դիմաց և Ս. Սրտին
 Յիսուսի, պաշտաւունք Վարդարանի, Հան-
 րաձից, Արտասուաց և անարատ Սրտին Մա-
 րիամու, ջերմեանդութիւնք Աստուածամօր
 Լուրտի, Սալէգի, Լոռէգի. Բիւրաի, Յաղ-
 թութեանց, Բոնմէնի, Բէլվուազէնի, Բոմ-
 բէի... ասոնք և գեռ ուրիշներ անշուշտ
 պարտաւորիչ չեն, բայց ամէնքն ալ առար-
 կայ են աստուածային հաճութեանց, և մեզ
 անսպառ աղբիւր մխիթարութեան, շնորհաց
 և օգնութեան:

Ո՛վ չի գիտեր մեր երկրպագելի Փրկչին
 պայծառ յայտարարութիւնը իր սիրելի աղա-
 խիններէն միոյն.

Ոչինչ կ'ուզեմ բռնի, այլ անեկայն ինչ սիրով.
 Je ne veux rien par force, mais tout par
 amour.¹

Հետեւարար ուսեալ և լուսամիտ կաթո-
 ղիկէ մը, բոլոր թիշկ թէ փաստաբան, բա-
 նաստեղծ թէ ճարտարապետ, չի ներեր ինք

իրեն ո՛չ տարակոյս և ո՛չ քննադատութիւն
 մը այս մասին. Կրնայ ինք անձնապէս ա-
 սոնցմէ ոմանց նկատմամբ համակրութիւն
 կամ ճաշակ չգալ, բայց կը պատուէ Եկե-
 ղեցւոյ յորդորները, սուրբերու զգայունե-
 ըրը, կը յարգէ այլոց ճաշակները, և հեռու
 գայթակղութիւն պատճառելէ, շինութիւն
 կ'ըլլայ ամէնուն իր լուրջ, բարեկիրթ ու
 յարգալիր վարմունքով:

Ահա մեր համոզումը որ — կը կարծենք —
 որչափ համաձայն է կաթողիկէութեան գրոյն
 և ոգւոյն, նոյնչափ և օրինաւոր ողատու-
 թեան ու ճշմարիտ քաղաքակրթութեան
 սկզբանց:

ՎԱՆԱԿԱՆ

15 Ognusnu 1914

ՀԻՆ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ

Օ Ր Ա Փ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՍԻՑ ԻԷՄ

(1827 — 1830)

Ճուռնաս կիւն 20. — Պու սրատա իքի ֆա-
 միլեա պիրի Թիրեաքի Բարբիէլին օղլու Սա-
 մանճեան Ստեփան վէ էհլի չօճուքլարըլյա,
 օ պիրի Ինճիճի Թումանըն օղլու Պօղոս, Ա-
 լան օղլու Պետրոս տամամը Աքապի էհլի իլէ
 վէ Յուսէփ քայնը ֆիրար իթմիշլէր իտի
 Բարա տէնիզ պօղազընտա պիր ֆրէնկ կէմի-
 սինէ, քի ծնտան Մօսքօֆա վարաճաքլար
 ըտը. պունլար պիր թաքըմ ճուհալէ մաքու-
 լէսի օլտուքլարընտան, կէմինին անպարըն-
 տա վալց օլունու հօրասընը թէփէր իքէն,
 կիւվէրթէտէն թայֆանըն պիրի տուլուպ հօ-
 րա շամաթասընը, աշաղը էնիյօր վէ Պօղո-
 սուն էհլի Աքապի իլէ քօլ քօլա հօրա չէք-
 մէք արզուընտա իքէն Սամանճեան Ստե-
 փան էլինտէքի թիւթիւն չըպըղը իլէ պիր
 քաշ վուրույօր թայֆայա, արալտէ արասը

¹ Vie et Révélation de la Bienheureuse Mar-
 guerite-Marie.

քարտան տույտուքտա իւստէ վարրօյր . վէ մասլահաթը աղնայրպ , քէնտի տէ տէօյէյօյր օ թայֆայը լազըմընճա . թայֆա տայաղը եէմէտէ , հօշունտույու եիւրէյինէ քօյուպ հիշ թընմայօր . էրթէ կիւնիւ ֆըրտանտ պուլուպ տօղրուլույօյր Եէնիքէօյէ Հիւսէյին փաշայա , օ քի Տիւզլէրաէն քալմա եալլտա քօնաքիտէր իտի , ծնտա պիւրէր պիւրէր հալլ էալիօր կէմիտէ քաշկըն օլանլէրին ահվալինի :

Ճուռնաւ Կրթիսի 21. — Հիւսէյին փաշա պու հապէրի ալտըքտա , անիտէ մուպաշըր կէօնտէրիւր կէմինին իւզէրինէ վէ էլէ կէչիւրիւր օ քաշկընլարը թաքըմ իլէ , հաշան հուզուրունա չըքարլարսա պուսլար ֆրէնկ քիսվէթինտէ , սօրար փաշա . նէ հարէքէթ տիւր պու . ծնլար սերպէսթ ճէվապ իտէրլէր . էֆէնտիս , պիզ նէ իտէյիտիք փաթրիին էլինտէն , տաաֆիրեաթ թաճիզ գալմիշտըք . պու չարէյի պուլտուք . Հիւսէյին փաշա իշիտիպ աղնատըքտա պուսլարըն հալինի , իլքին քըլըքլարընր տէիշտիւրաի , ըայա քըլըղընա սօքտու վէ էօյլէ կէօնտէրտի փաշա քարուսունա : Հիւսէյին փաշանըն պու էտիշի ֆաքիւրլէրին հակկընա խայրլը օլտու , եօքսա շիւփհէսիզ էօլիւմ զուհուր օլտուտու : Նիճէ վարտըլարսա փաշա քափուսունա էրքէքլէր հաիս օլտու միւքսիւր աղատա վէ քարըլար Փաթրիքանէյէ թէյիւմ . փաթրիք տէ կէօնտէրտի Նարլըքարու հաստալարընա : Պու կիւն Վօյվաթտան նիազ արզը կէլիյօր Պիլէգիքճի օղլու Պօղոս աղատան Պէզճեան Արթին ամիրայա , պիւր չարէ էթսին քէնտինէ , օլտուղու մահալտէն խէլաս օլմաղա , զիւրա հալմաը դալէթ ֆէնա սրթմալը իտի . ամիրա տա ֆէրմանը թէպալլ էթտիւրտի եաքըն եէրէ Ատա պաղարընա չէվիւրտէրէք : Պու կիւն Արթին ամիրա աքշամ իւստիւ դարպահնէտէ օլան քաթօյիք ամէլէլէրտէն 30 քըտար տըչարը էթտի . չիւն պուսլար հայ ժամընա կիտիպ խոստովանանք օլմամըչլար ըտը :

Բազար կիւն 22. — Բէօյէք օղլու Թօմասը , սաաթճը Մանուէլի , Թէրճէման օղլու Բէվորքու վէ Սաքըլը օղլու Արթինի միւքսիւր աղայա քալտըրտըլար , ճէլալի օղլու

մէրհում Թէօփիլէնին ֆամիլեասընը եանի՝ Յակոբ պէօյիւք էվլասընը Ուսուլա էլինի , մարապեա Աննու հէմչիրէսինի վէ 6 քըզլարընը Պէչիքթաշտան քալտըրտըլար Ըսպարթայա սիւրալլէր : Թալուքճու օղլու Պօղոս ֆամիլեասը իլէ էնկիւրիւլէ սիւրտիւլէր , պէրպէր Սաեփանը վէ Հէզարիֆէնտ Ալիքսանը՝ Թալշանլըյա , քուլումճու Ամբրօսու տա Պալըքէսէրէ , Հէզարիֆէնտ Սէրքիսին էնիշտէսինի միւքսիւր աղայա քալտըրտըլար :

Բազար Կրթիսի 23. — Սաքըլը օղլու Արթինի , Թէրճիման օղլու Բէվորքու , սաաթճը Մանուէլի վէ Սէրքիսին էնիշտէսինի՝ Բարամանա սիւրտիւլէր : Տէօնէյիւմ Հալլարա . Ղալաթա վէ Պէյօղլու տէրտէրլէրինտէն Յիւրիւ Թէքիրտաղա կէօնտէրտի փաթրիք . վէչնի պուսլար քէնտի թարաֆլարընտան աքէթ թամահր իլէ պազը Էնքարլիլէրի Ասիթանէլի եազմըչլար . եա տիւէր վիլայէթլի . պատէհու քաթօյիք էվլէրինէ կիրիպ չըքըպ սիլէ պայիս սէօզլէր սաշմըչլար . չօք սէօզլէրի փաթրիին հաքքընա տէնմիշ պահանէլէր գօյարտպ իւզէրինէ . պու սէպէպէ մուսթահաքը պուլունտուլար նէֆ օլմայա . պուսլարըն պիւրի Տէր Չաքար ըտը ֆէնտա պաշը . պու ատամ հալաճումուն իպթիտաընտան պաշլատըր չօք ճանլար եսքմաղա . ծնու իչին քըմէթինէ 3 նէօպէթ սիւրկիւնլիւք չըքար էօնիւնէ , թիւրլիւ իլլէրտէն սօլայը . հաթթա իլլէրինտէն քիչիւք Տէր Յակոբ տէմիշ իտի Յիւնէ տօղրու . Տէր Չաքար սէն եաթաղընտա էօյէճէքսին . պուսա մէնէնտ պաշգա՝ տէրտէրլէր տահի պուլունտու պուսլու ֆաալ իտէն , Յուգա իտի իւզէրինէ գօյարագ . օ պիւր իքիսի պիւրի ճիզմէճի պօզմասը Տէր Բարրիէլ վէ Տէր Րափայէլ Տաթիւաքի հարաքէթլի մախսիլէք :

Ճուռնաւ Կրթիսի 28. — Պու կիւն Սաքէր օղլու Աքրահամը սալվէրտիլէր Նարը հաստալարրնտան . չիւն եազը իլէ խոստովանանք օլմուլունտու օլատա , տիլի թուլտուք օլտուլունտան : Պու կիւն տէֆա պիւր թաքըմ գարպահնէ ամէլէլէրի քօվուլտուլար խոստովանանք օլմատըքլարը իչին . Պէզճեանըն թէրթիպի իլէ :

Չարչաւոյցա Մայիս 2. — Ֆիրէնկ այնքանա
օլան փափաղարտան Յիւ, եանի Իլմիր սի-
եռնը Մօնսիէօ ձիւղէ, Յունան օղլու մօն-
ս'էօ Բաֆայէլ Լազարիսաւէր վէ բատրէ ձիւ-
ղէփօ Տօմէնիքան կիթտիլէր Շիրա ատաոր-
նա, քէնտիլէրին մեծաւոր էմրի իլէ, եօք քի
չըքան պուրուլթու քօրքուսուտան, եօքսա
կէրիտէ քալանլարա տա սըրա կէլմէլի իտի:
Պու կիւնէրտէն սօնրա զարպհանէ՝ ամէլէ-
սինտէ քաթօլիք լուսը քալմատը, անճա
ժամա կիրէն խոստովանանք օլան, պուռն-
լարտան պաշգա պիր քաշ պէօյիւք ուսթա-
լար պուլունտու քաթօլիքիքիքի քալան, լու-
քին ծնլար Պէզճեհանլըն զայէթ նազարընտա
օլտուքլարընտան, քէօր թարափընտա պու-
լունտըլար:

Ճումասա կիւն 4. — Մօմհանէլի քալիւքճը
Արթին էվլաւարը 3 քարտաշլարը քալտըր-
տըլար միւքսիւր աղայա:

Ճումասա երթեալ 5. — Պու իւշ քարտաշ-
լարը սիւրտիւլէր Տուրկուլթա վէ Կիւ միւշ-
հանէլի թիւթիւնճիւ Յակրբու վէ ասամտը
օլան Այիքսան օղլու Յուսէփ վէ սաաթճը
Ստեփանը քալաւրաւըլար միւքսիւր աղայա:

Բազար կիւն 6. — Կէմիտէն թութուլան
էրքէքէր քի միւքսիւր աղատա իտիլէր, չը-
քարըպ կէօնտէրտիլէր նարըլտաքի հաստա-
լարա քի կէօրիւշսիւնլէր ֆաթիլեալարը իլէ.
սօնուռտա քալըլա քօյուպ սիւրտիւլէր Բու-
մէլինէ Տիւթթօքայա:

Բազար երթեալ 7. — Թիւթիւնճիւ Յակո-
բու վէ Յուսէփ տամատընը վէ սաաթճը Ըս-
սահփանը էվէրէքի սիւրտիւլէր:

Սալը կիւն 8. — Օրթաքէօյիւ Քէօչէք
օղլու Թաւմաս փաթրիէ ղէճա էթտիլիպ օ-
նա խոստովանանք օլտու, փաթրիք տէպու-
նա ապաշխարանք տէի պուռնու քօմուշ, պիր
այ թամամ եէօլմիյէ սաալահլարը քիլիսէյէ
վարըն տա պիր պաաթ տուրսուն օնտա.
իլթէ պու թարզ իլէ իւշլաա օլտու միւքսիւր
աղատան: Պու կիւն Պէզճեհան ամիրա կէօն-
տէրիյօր քաթօլիք թայիֆէսինաէն 8, 10
քիլի փաթրիքհանէյէ. ֆարգա քէնտի լիտա-
նէն սէօյլմէյօր ամա տիւթիլիէ սէօյլմէյօր,
եանի էրամ աղա իլէ. վարսընլար փաթրիէ

րէճա էթտիլէր վատէ ալմաղա տիւշիւնմէ
իլին. նիճէ վարտըլարտա Փաթրիքհանէյէ.
օնտա պուլտմատըլար փաթրիի, ֆաքաթ
Պէզճեհան ամիրա օնտա պուլունտու տա հիշ
պիլմէզ կիպի սօրտու կիաէնլէրէ. նէ իս-
թէրսինիզ. ճէվապ վէրտիլէր ծնլար, պու-
րայա կէլմէմիլիլն վէչհի շու տուր, ամիրա
տա տէտի պուռնլարա, սիլ չիմաի կիտին,
հաչան պատրիարք կէլիքսէ, պէն սիլ իլին
րէճա իտէրիւ, պիր էյեամ միւստատէ էթ-
սին սիլէ, թա իլինիլի պիթիլէրէ քըտար.
լաքին սիլ տէ քայրէթ էտին պիր սաաթ
իլէրի ժամա վարըպ խոստովանանք օլմաղա.
զիրա քափու թարափընտան փաթրիքի սը-
քըյա քօմուշլար ճէվապ իսթէյօլլար, էկէր
սանա միւթիւ օլմայանլար քալմըշ իսէ պիլզէ
հապէր վէրին, պու սէօյլէյիշ աղըզ թամ-
պուրասը իտի. զիրա օ կիւն պու կիւն փաթ-
րիին իւնիւ պաշլատը կէրիլէմէյէ. հաթաա
սիւրկիւնէ կիտէն տէ օլմատը. լաքին փաթ-
րիէ կիաէն աղալար պուռնլար ըտը. քույու-
մու պաշը էրամ աղա, պաշ մուպայաճը Քէ-
վօրք աղա Ազնաւորհան, Ապտուլլահ օղլու
ինճիլի Քէվօրք աղա, պուռնուն ամուճա օղ-
լու Սիմքէշ Հիւրմիւզ աղա վէ սայրը պիր
քաշ քիլիլէր. պուռնլարըն իլինտէն պաղըլա-
րը հիշ կիրմէմիշ իտի հայ ժամլուա:

Բերքեկպե 17. — Սապտաշէյին պիր ժամ-
կոչ մահալլէ քէհաաղը վէ պիր քաշ տէրաշը-
լէր վարտըլար քաթօլիք էվէրի պատըլար.
վէ 6, 7 քիլի թութուլո պ կէօնտէրտիլէր
փաթրիքհանէյէ. նիճէ պուռնլարը կէօրտիւ ի-
սէ փաթրիք, սիւալ իթիի. նիլին չըքմա-
յօրտունուպ էվէրիլիլաէն, օքունան ֆէր-
մանլարը իլիթմէտիլիլ մի, փատիշահ նութ-
քու. ֆէրմանա իթաաթընըզ հօք մու. ծնլար
ճէվապ վէրտիլէր. Հայր սուրբ, օքունան
ֆէրմանլարը իլիթտիք վէ իթաաթընըզ վար
փատիշահա վէ սիլէ, անճա ֆուքարէլիլի
պիլիլմիլին, պիլիմ հէյէճէք էքմէիմիլ հօք
վէ հանկը սէմթէ էվ թութմաղա վարտըր
իսէ 10 զրուշլըք հէրէ 40 զրուշ խոտէտիլէր.
տէֆա պիր ելլըլընը բէշին խոտէյօլլար, օ-
նու իլին Պէյօլլունտան ալըլամատըք. չիմոի
սէն պիլիլմիլին, իշտէ էլինտէիլ վէ պիր աք-

ճէմիւ տէ հօք տուր : Օլտէմ փաթրիք չըքա-
րլայ 12չէր զուրուշ վէրտի հէր պիրինէ վէ
ըմտուրլատր մուծլաքա էյլէնմէյիւլ չըքասը-
նըզ 3 կիւնէտէք Պէյօղլուէնտան . տէֆա սէօյ-
լէտի . պէն աղնաթմըլըմ էվ սահիպլէրինէ քի
աչըրը ֆույիշ քիրա իսթէմէսինլէր նէ տէ փէ-
չին . պոււնու տէտիքտէ հօլ վէրտի օլ ատէմ-
լէրէ . օնտան սօնրա պաշլատը ճէմահաթա
վազ վէրմէյէ . օլմայա զիւտտէ թաշկըն քի-
րա վէ ընչին իստէյիւլ ալատընըզ , զիրա ,
տէտի , քուլաղըմ տօլայօր կէլէն շիքեայէթ-
տէն . պօնսուն իւզէրինէ տէֆա իշխաէճէք
օլուրտամ շիքեայէթ , էօյլէսինի միւճմահալ
էտիւ պրազըրըմ . պու ճիւմէ հէր քէս եինէ
պիլտիինտէն շաշմատը , զուլուճաթը իճրա
էթտի ֆըրտանտ արը տէի :

Ճուռնաւ երթաի, քազար վի քազար երթ-
աի 9 վի 10 . — Էվլէրին սաթըլմատը մէքս
օլտու պիր էյետմ սաթըլմատը , լաքին ազ-
ղն էրմէնլէր ըահաթ տուրմայրլալ էթրաֆա
ուպուտիյէթ եէտիրիւլ պիր իքի ալտան սօն-
րա տէֆա էվլէր մէզաթ օլմաղա պաշլատը :
(Շարունակիլի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀԱՂԵԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԹԷՆ

ԳԻՐԲ Ա. — ԵՂ. ԻՓ. — Մանուան մօտօնքեան վրայ :

Երբ աւաւտօ ըլլայ, միօսի դի'ր որ իրիկուն լաի-
թի հասնիս :

Իսկ երբ իրիկուն ըլլայ, մի' համարձակիր ինզի
իտսաւկալ աւաւտօք :

Ուսի միշտ պատրաստ եղի, եւ ա'յնպէս ապրե
որ երբիք անպատրաստ չգտնէ զիւզ մահը :

Շատերն յանկարծ եւ յանակնկալս կը մեռնին :

Որովհետեւ չկարծուած ժամուն պիտի գայ Որդին
մարդոյ :

Երբ այն յիշին ժամն հասնի, շատ տարբեր կերպով
պիտի սկսիս մօտեղ յոյր անցած կեանքի վրայ, եւ
յոյժ պիտի ցալիս որ ա'յնչափ անիոյր ու թոյլ զը-
նուեցաւ :

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

Հեթանոսները տեսնելով Ս. Գեորգին բանտին մէջ
ըրածները, դաջին կայսեր պատմեցին : Կայսրը դար-
ձեալ առջեւ կանչեց Սուրբը և սկսաւ այս անգամ
քաղցրութեամբ և ողորդական խօսքերով զինքը ու-
րացութեան ստիպել :

Իպիջ ճշմարտութեան այս վեհանձն խոստովա-
նողը չուզելով այլ եւս խօսքով պատասխանել այլ
գործքով, ինդրեց մեհեանը երթալ և հան ածոր պաշ-
տած տատուածները տեսնել : Դիտելէտիանոս կտրծե-
լով թէ Գեորգ վերջապէս խելքը գլուխը կը ժողվէ և
տեղի կու տայ, Երեմկոյսը և ժողովուրդը հաւա-
քել տուաւ ոչպէս զի ամէնքը տկանատես ըլլան
Գեորգի մատուցանելիք հանդիսաւոր գոհն : Երբ ա-
մէնքը աչքերնին Գեորգի վրան յառած կը սպասէին
անձկութեամբ, ինք մօտեցաւ Ապոլոն կուս քին : Ապա
ձեռքը երկնցուց, խաշակեց և ըսաւ անոր. Կ'ու-
զի'ս որ զոն մասուցանել քեզի, իբրեւ Աստուծոյ : Աս-
տանան, որ արձանին մէջն էր, պատասխանեց. Ես
Աստուծոյ չեմ, բաւ քաղածէդ ուրիշ Աստուծոյ չկայ :
Իսկայն բոլոր կուսքերը տխուր և արհաւիրտ ձայնե-
ր ձայնելով ինկան կործանեցոն կտոր կտոր եղան : Ա-
սոր վրայ մեհեանին քաւրները գրգռեցին ժողովուրդը
որ սուրբ Մարտիրոսը բռնեն կապին, և կայսեր ըսեն
թէ պէտք է փութով կտրել այս կախարդին գլուխը
որպէս զի ըլլալ թէ չարիքը աւելի տարածուի : Ուս-
տի շուտ մը Սուրբը տարուեցաւ պատժաւալըր, ուր
քիչ մը աղօթելէ յետոյ գլխատուեցաւ 303, Ապրիլ
23ին :

Սուրբ Գեորգի նահատակութեան տեղւոյն վրայ
վկայաբանք իրարու չեն համաձայնիր : Ոմանք Դիոս-
պոլիս կը համարին, ոմանք ալ Մալաթիա քաղաքը :
Հաւանաբոյն է որ Սուրբը նահատակուած ըլլալ Նի-
կիոյի մարմինը փոխադրուած ըլլալ Դիոս-
պոլիս, ուր երկար տարն հոյակապ տաճարի մը մէջ
հանգչեցաւ :

Սուրբ Գեորգ միշտ անուանի հանդիսացած է
Արեւելքի և Արեւմուտքի բոլոր եկեղեցիներուն մէջ .
Յայնէրը զինքը կը կոչեն Մեծ Մարտիրոս : Իր պատ-
ուական նշխարները տարուեցան Հռոմ, Բարիզ, Կո-
լոնեա, Վենետիկ :

Թագաւորները իրենց բանակներուն պաշտպանը
կը նկատեն Սուրբ Գեորգը : Հռոմէական եկեղեցին
զայն կը համարի իբրեւ մին իր առաջնակարգ պաշտ-
պաններէն : Մեր նախնիք ալ պատեւալի մատն նոյն
Սուրբին պատպանութեան կ'ապաւինէին : Խաչակի-
րները անոր օգնութեամբ Երուսաղէմի տիրեցին և
այնպիսի հոյակապ և քանդակի յաղթութիւններ տա-
լին որ աշխարհիկներն ալ սկսան զարհուրել Սուրբ
Գեորգէն և զանիկայ յարգել, ինչպէս կը գրէ Խաչա-
կիւրներու ժամանակակից Գուլաթեր պատմաբանը :
Նոյնը կ'ըսէ թէ Կիպրոսի Առնիկա քաղաքին եկեղեց-
ւոյն մէջ տեսնեք որ այլազգիները բոլոր պատկերները

պատուած էին, բայց բնաւ չէին դպած Սուրբ Գեորգ ձիաւորին: Անոնք շատ բարեգուշակ կը համարին Ս. Գեորգի տօնին օրը, զոր Խաղիլէզ կ'անուանեն: Իրենց ամիրայեանին գերեզմանին այցելութենէն զարձած ատեննին կրօնական մեծ անկարգութիւն մը կը համարին չանցնիլ Ս. Գեորգի տաճարէն որ Բեթղէմէմի եւ Երուսաղէմի միջեւ կը գտնուի Ս. Գեորգ նոյնպէս կը պատուուի այլազգեաց կողմէ նաեւ Ռէմլէի եւ Պէրուլթի մէջ: Երուսաղէմի տաճարէն յետոյ այնքան աւելցաւ Լատինացւոց մէջ Ս. Գեորգի քերականութիւնը որ Բարեպարք կ'ըսէ թէ ամբողջ Բեթղէմ, ինչպէս նաեւ Երուսաղէմի ուրիշ տեղերուն մէջ «Մեծ կամ փոքր քողարք մը չկայ, ուր Ս. Գեորգի նուիրուած սաճար մը կամ մտառաւ մը կամ գոնէ խորան մը եւ եղբայրութիւն մը չգտնուի: Այն սաճարն ի վեր դանիկայ իրենց պաշտպանութեան ընտրեցին կրօնքի կամ հայրենիքի պաշտպանութեան սահմանուած բազմութիւն միաբանութիւններ եւ նոյն իսկ ամբողջ ազգեր եւ թագաւորութիւններ, ինչպէս Լուսիտանիա, Արագոնա, Անգղիա եւն:

Սուրբ Գեորգը կը նկարեն առ հասարակ ձիաւորի կերպարանքով, որ կը յորձակի վիշապի մը վրայ՝ իրմէ օգնութիւն խնդրող դեռատի ուղիղի մը պաշտպանելու համար: Բայց այս նկարը աւելի խորհրդանշան մը կը ներկայացնէ քան իրական դէպք մը, ցոյց տալու համար թէ այս նշանաւոր վկան ազատեց իր գաւառը, որուն նշանն է ուղիղը, կռապաշտութենէ, որ պատկերացուած է դժոխքէն ելած վիշապով:

ՊԻՈՍԺ.

Այս փառահեղ անունն ալ անցաւ Պատմութեան, որուն ամենապերճ մէկ էջը պիտի զարգարէ, Ս. Եկեղեցւոյ ամենամեծ պարծանքն եղող Քահանայապետներու քով ցանդ յիշատակելի: Մանաւանդ իր սրբականացալ վարքը իր գլխաւոր եւ չնաշխարհիկ տիպաւորներէն մին է, որոնց համար մարդկութիւնը երբեք չպիտի կարենայ ի մոռացօնս դատապարտել: Անոր քաղցր յիշատակը, մինչեւ իսկ քնաւ անճա՛ն եւ անորժան չէ հաստատապէս անկախել որ օր մը Անոր ձգած բարի օրինակները իբր նմանութեան չքնաղ առարկայ եւ Անոր բարիխօսութիւնը իրր հզօր վաճան օգնականութեան պիտի ներկայացնէ հաւատացելոց Ս. Եկեղեցին: Եւ քանի որ դեռ այսքան թարմ է եւ կենդանի այդ օրհնութիւնաբեր յիշատակը, կ'արժէ յիշուի որ մեր պատուական ընթերցողնե-

րուն ներկայացնենք հակիրճ կենսագրականը Անոր, որ՝ այլուստ մեր ազգին ամենադորովալի սիրող մը եւ մեր Հասարակութեան անդուգական բարերարներէն մին եղաւ: Օրհնութեամբ ըլլայ Արդարոյն յիշատակը:

Պիոս Ժ. ծնաւ Իտալիոյ Րիէզէ քաղաքին մէջ, յ2 Յունիսի 1835: Իր հայրն էր Յովն. Սարթօ եւ մայրը՝ Մարգարիտա Սանսօն: Թէեւ հնաւանդ քրիստոնէական բարեպաշտութեամբ վարդարուած էր այս ընտանիքը, սակայն եւ այնպէս իր նիւթական վիճակը բնաւ նախանձելի չէր: Հայրը դաւաճին նամականսն բաշխիչներէն մին էր, որ իր այս պաշտօնին փոխարէն կ'ընդունէր օրական կէս Փրանդ (շուրջ 100 բարա). ունէր նաեւ պզտիկ սնակ մը եւ երեք կտոր փոքրիկ արտեր: Մայրը դերձակուհի էր:

Տղեկը ծննդեանը երկրորդ օրը մկրտուեցաւ եւ անունն առաւ Յովսէփ-Մելքոն:

Մայրը ճշմարտապէս օրինակելի տիկին մըն էր. արժանի էր նա այն գեղեցիկ տապանագրին զոր իր որդին Սարթօ կարդինալը, անոր մահուան առթիւ գրեց 1893ին. ահաւասիկ այս տապանագիրը.

«Աս հանգչի Մարգարիտա Սարթօ (ծնեալ Սանսօն). անուսին օրինակելի, կին իմաստուն, մայր անհամեմատելի. ցաւալի եւ ուրախաւոր դպրեալ մեջ հասկաւ եւ անկողնոյդ, առնական զգօնութեամբ դաստիարակեց իր ինը զաւակները, արդարի մահուամբ պսակեց աշխատանքի ու զոհողութեան կեանք մը»:

Քահանայապետը միշտ մեծարեց ու սիրեց իր մայրը իբր իւր ամենամեծ բարերարունին, որուն դաստիարակութեամբ եւ բարի օրինակներովը ինքն ալ զարգացաւ առաքելութեան մէջ, եւ որուն աղօթից օժտուողական նուիրապետութեան Այս մայրը երջանկութիւնն ունեցաւ տեմեկու իր որդին կարդինալ եւ Պատրիարք Վենետիկոյ եւ արժանապաւ Լեւոն ԺԴ. Քահանայապետին տամենամեծ վստահութեան, որուն ներկայացուելու բախտը ունեցաւ Սակայն ծերացած կ'ընր (81 տարեկան մեռաւ), որ կեանքի թշուառութիւններուն դառն բաժակէն

տոտտ խմած էր, որ եւ իցէ աղաչանքի տեղի չտուաւ՝ լքոնելու համար իր երկիրն ու անակը։ Երբ իր զաւակը՝ Կախկոպոս եղած, առաջին անգամ եկաւ Րիէզէ, բարեպաշտ մայրը անոր սաքն ինկաւ և կ'ուզէր համբուրիլ ձեռքը։ որդին թոյլ չտուաւ։ Այսօր քան թորի ու քսուցը մօր մը նկարը միշտ պատնեհակին մէջ առջեւն ունէր մեծ Բաւհանայապետը։

Պիտո Ժ. ի մանկութիւնը հանգարաւ թեամբ անցաւ։ արաւքոյ կարգի հնազանդ էր նա իր ծնողացը։ անգանգատ կ'երթար ուր որ զրկէր զինքը իր հայրը։ Կը կատարէր այն սոէն անական գործը զոր կը հրամայէր մայրը։ սոէպ պահապան կը կենար իր պղտիկ եղբայրներուն, եւ մերթ եւս կ'արածէր քանի մը անասունները զորս ունէր այդ ընտանիքը։

Շատ վառվառն մանուկ մըն էր Յովսէփ Սարթօ. և իր ընկերներուն հետ անմեղ խաղերու մէջ ալ կը մրցէր։ սակայն սոէպ կը թողուր իր ընկերները եւ կ'առանձնանար, իր գտները սորվելու, եւ յաճախ եւս աղօթելու համար։ Գեղեցիկ եւ կանանչազարդ մարդերու եւ անտառներու մէջ փոքրիկ եկեղեցի մը կար, Ս. Կոյս Տիրամօր Վերափոխման նուիրուած, որուն փայտեայ մէկ արձանը, որ հրաշապօրծ էր, ամբողջ շրջակայից փողովուրդներէն կը մեծարուէր ուխտագնացութեամբ։ Փոքրիկն Սարթօ մեծ յարգութիւն ու ջերմեռանդութիւն ունէր այս Տիրամօր և զայն միշտ օգնութեան կը կանչէր՝ իր ամէն նեղութիւններուն ու կարօտութիւններուն մէջ։

Հաղիւ թէ ուսմունք ընելու տարիքն ունեցաւ, Րիէզէի դպրոցին մէջ դրուեցաւ։ ուր արթուն տաղանդովը եւ վառ բնաւորութեամբը ուսուցչին ուշադրութիւնը յինքն գրաւեց, ու բարեպաշտութեամբ կը ծառայէր եկեղեցւոյ մէջ։ Բնաւ չէր պակսէր քրիստոնէական վարդապետութեան մեկնարանութիւններուն, խրատաբանութիւններուն, և ուրիշ քրիստոնէական հրահանգներու որոնք տարուան այլեւայլ եղանակներուն մէջ կը կատարուէին։

Տարրական կրթութիւնը աւարտելուն պէս, Րիէզէի Աւագերէցը եւ ուրիշ քահանայ մը սկսան դաստիարակել Յովսէփիկը, որոնք անոր հոգւոյն մէջ կերպաւորեցին ու ապաւորեցին ոչ միայն հոգւոյ կարողութեանց մշակութեան սկզբունքները, այլեւ ճշմարիտ բարութեան եւ աստուածապաշտութեան սերմեր ցանեցին անոր մատղաշ սրտին մէջ, որ եւ ի ժամանակին տուին իրենց առատ պրտուղները, հարկերաւոր ու բիւրաւոր։

Յսովն 1846 ընդունեցաւ Սարթօ Դրոշմի խորհուրդը, եւ հետեւեալ տարին մօտեցաւ Առաջին Հաղորդութեան. ցնծացող սիրտը կը արօթէր երջանկութեամբ, Ս. Հաղորդութեան ապագայ Բահանայապետին, որ այդ երջանկութիւնը ուղիւ ընդհանրացուց ամբողջ կաթողիկէ մանկութեան։

(Շարունակելի)

ՅԱՐՄԱՍՕՆՈՒԹԻԻՆԸ

Գ. Լ. ՈՒՆ Ս.

(Շար.)

14. Մարգս երկրորդարար պարտական է Աստուծոյ հնազանդելու, քանզի բացարձակապէս պէտք ունի Անոր. վասն զի եթէ կրօնայ արհամարհել աստեղական կեանքի անցաւոր բարիքները, և խելամոռէն կամ անխորհրդարար դիմագրաւել չարիքներու, չի կրնար սակայն բնաւ երբեք անգոմանել կատարեալ երջանկութիւնը՝ որուն սահմանուած է իր բնութեան ներքին հարկաւորութեամբը։ նոյնպէս չի կրնար արհամարհել բացարձակ թշուառութիւնը և յուսահատութիւնը որուն մէջ պիտի իյնայ դժբախտօրէն՝ չկարենալով հասնիլ Աստուծոյ իրեն համար որոշուած նպատակին, և ոչ ալ կրնայ արհամարհել այն դրական պատուհանները, զորս Տէրը կը սպառնայ իրեն։ Եսայի մարգարէն կ'աղաղակէ. Զեզմե ո՞վ պիտի կրնայ քնակիլ յալիսեմական քոցերուն մէջ (Գլ. ԼԳ.)։

3. Պակասաւոր է մեր ընկերին հանդէպ։

15. Ձևաւորուած մերթելով, ուրիշ մարդոց հանդէպ ունենալիք պարտականութիւններն

ալ կը խախտին, կը նուազին ու կ'այլափոխին: Որովհետեւ 1. Բրիտանիայական կրօնքը Աստուծոյ անուամբը կը պարտադրէ զայն մեզ, և Աստուած իրեն եղած կը նկատէ բարիքը կամ չարիքը զոր կ'ընենք մեր ընկերներուն, և այնպիսի՝ վսեմ ծագում մը կը պարզեւէ այն գործքերուն զոր չենք կրնար երեւակայել, և ամենամեծ հաճութեամբ կը փոխարինէ, իբրեւ թէ նոյն իսկ Աստուծոյ հանգէպ պարտականութիւններ ըլլային անոնք:

Բայց ընդհակառակն զԱստուած մերժելով այդ գործերը լոկ մարդկային և սոսկապէս բնական կը նկատուին, որոնց որքան մեծարժէք կարողութիւն ալ վերադրես՝ դարձեալ Աստուծոյ կողմէ հաստատուած և գնահատուած վսեմ ծագում ունեցողներէն միշտ անհունապէս վար կը մնան:

Ի մասնաւորի երբ կեանքի դժուար եւ բազմակնճիւ պատահարներու ատեն կիրքերը անզուսպ կերպով կ'ըմբոստանան ու Հաւատքի զօրաւոր շարժառիթները հապիւ կրնան զմեզ ուղիղ ճամբուն մէջ անսայթաք պահել և մեր պարտքերը կատարել սալ, ինչպիսի՝ ազդուութեամբ արդեօք պիտի կարենան գլուխ ելլել սոսկ մարդկային և բնական շարժառիթները: Կետեւարար ի'նչ չափ պիտի կրնայ ունենալ մարդկային ընկերութիւնը կրօնքի առաջարկած աստուածազգացիկ շարժառիթներուն տեղը երբ վերոյիշեալ սնամէջ և ուռուցիկ լոկ ինական ու մարդկայինները կ'առաջարկէ: Ի'նչ տեսակ հրեշային երիտասարդութիւն պիտի արտադրէ արդեօք այդ դրութիւնը, երբ այնքան առ չարն դիւրամէտ ու տկար բնութեան զլացուին գերբնական շարժառիթներ, միջոցներ, նպաստներ, արգելքներ և նախազգուշութիւններ:

Նոյն իսկ անհաւատը ինքզինքը բախտաւոր համարելու էր հաւատացեալ ժողովուրդի հետ գտնուելուն համար, քանզի աւելի սպանովութիւն պիտի ունենայ անոնց պարկեշտութենէն, երկիւղածութենէն ու արդարաւարութենէն:

10. 2. Աստուած ուրանալէ վերջ, կըր-

նա՞ք արդեօք դուք պահանջէր մարդէն որ այլ եւս ուրիշին պատկանած բանը չյափըշտակէ, ամենասովորական պարագաներու մէջ ուրիշներուն օգնութեան հասնի բնութեան համանմանութեան սիրոյն համար կամ համակրանքի, պատուոյ, հիացումի, երախտագիտութեան ակնկալութեան պատճառներով: Ո՛չ: Սակայն ի'նչպէս կրնաք սպասել և պահանջել իրմէ որ ինքզինքը գոհէ ուրիշին սիրոյն համար, քանի որ ինքն է իր վախճանը, և այս կեանքէն անդին վերապրիլ չկայ: Ամենամեծ յիմարութիւն պիտի ըլլար ուրիշին սիրոյն համար ինքզինքը գոհելը, և չէ թէ սքանչացումի արժանի, այլ կարեկցութեան և խելակորոյս արժանի արարք մը պիտի նկատուէր այն:

դ. Դաստիարակութիւնն ու կրթութիւնը դպրոցին մեջն ալ պէտք է որ կրօնի հիման վրայ հաստատուած ըլլայ:

11. Կրնայ մէկը այս ճամբարութեանց և իրողութեանց վրայ համոզուած ըլլալով հանդերձ հարցնել թէ միթէ չի՞ բաւեր դպրոցէն աւելի՝ եկեղեցւոյ և ընտանեկան յարկերու մէջ կրօնական ճամբարութիւնները սորվեցնել:

Ասոր պատասխանելը շատ դիւրին է: Բարոյականութեան իսկական ծագումը և զայն ամրապնդող, կազմաւորող շարժառիթները հարկ է բացատրել՝ մարդոց պարտականութիւններ սորվեցնելու ատեն, այլապէս դուն պիտի ցոյց տաս անոնց անկասար պատճառ մը՝ եթէ միեւնոյն ատեն ըսես որ ուրիշ մըն ալ կայ: Ախա՛ պիտի սորվեցնես՝ եթէ ըսես թէ մի միայն այդ քու սորվեցնեցածդ է և ուրիշ բան չկայ: Ասկէ վատ՝ ամէն ծնողք կարող չէ կատարելապէս զբաղելու իր զաւակաց դաստիարակութեամբ, և ասոր համար դպրոցները հնարուած են, որոնցմով ծնողաց թերակատար պիտութեանց պակասը կը լրացուի: Շատերն ալ եկեղեցի չեն գար կամ կը քաշուին հոն ունկնդրելու և սորվելու, կամ ստէպ պակսելով կիսկատար կը մնայ սորվածնին: անոր համար անսոթորինելի հարկ մը կայ դրականապէս պնդելու և սոր-

վեցնելու կրօնական ճշմարտութիւնները զըպ-
րոցին մէջ ալ :

Հոգեւոյս Սրբազան Քահանայապետն Լե-
ւոն ԺԳ. իր Քահանայապետութեան առաջին
օրէն սկսեալ ուշադրութիւն ընել տուաւ ա-
մենուն՝ այս ամենակարեւոր խնդրոյն նկատ-
մամբ, և 1878 Յունիս 26ին հրատարակեց
նշանաւոր կոնդակ մը, որուն մէջ ցայտուն
կերպով կ'ապացուցանէ թէ անհրաժեշտ և
անտնօրինելի է կրօնական ու բարեպաշտա-
կան զաստիարակութիւնն զպրոցներու՝ մտ-
նաւանդ կաթողիկէ վարժարաններու մէջ, և
ամենամանր պարտականութիւն ունին այդ
վարժարաններն ու անոնց տեսչութիւնները
զգուշ կենալու և ընաւ չչեղելու անկէ :

Մ. Մ. Վ. Մ.

(Շարունակելի)

ՀՈՈՄԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅՍ.ՋՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

(Շար.)

Եկեղեցւոյ մէջ, հարկ կա՞յ արդեօք ըսե-
լու, այսպիսի մոլորութեան մը հետքն իսկ
չկայ. ընդհակառակն հոն ամէն ինչ մեզի
կ'աղաղակէ իշխանութեան աստուածային
հանգամանքը : Փոյթ չէ թէ հոռմէական Քա-
